

607



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«22» 01 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 011 - 25

Նախաձեռնող՝

«Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ

Արարափի մարզ գ. Արևաբույր, Վ. Սարգսյան փ. ք.10

Գործունեությունը՝

Շաղափի տրավերտինների հանքավայրի
օգտակար հանածոյի արդյունահանում
Արարափի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 011-25

«22» հունվար 2025թ.

Շաղափի տրավերտինների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն


Նախաձեռնող՝	«Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	/Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Վեդի համայնք, Շաղափ բնակավայր

Ներածական մաս. Շաղափի տրավերտինների հանքավայրը գտնվում է Արարատի մարզի, Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի վարչական տարածքում՝ Շաղափ բնակավայրից 4 կմ, Ուրցաձորից 5,1 կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տեղամասի հողերը ներկայացված են համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրեր:

Փորձաքննությունն իրականացվել է համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) պահանջներով՝ 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ ԷԲՊ նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ 04.11.2008թ թիվ 189 որոշմամբ՝ որպես բլոկների /ԳՈՍՍ 9479-98/ և շինարարական քարերի /ՀՍՍ 100-95/ արդյունահանման, իսկ դրա արդյունքում առաջացող ջարդքարի և մերձմակերևույթային հողմահարված տրավերտինների օգտագործումը ղեկորատիվ խճի և ավազի /ԳՈՍՍ 22856-89/ արտադրության համար: Բլոկների միջին ելքը կազմում է 39%:



Հայցվող պաշարների եզրագիծը ARM WGS-84 համակարգով.
Բացահանք 1

1. Y=8489531.0000	X=4420268.0000
2. Y=8489648.0000	X=4420346.0000
3. Y=8489729.0000	X=4420289.0000
4. Y=8489806.0000	X=4420238.0000
5. Y=8489923.0000	X=4420163.0000
6. Y=8489727.0000	X=4420070.0000
7. Y=8489616.0000	X=4420144.0000
8. Y=8489483.5000	X=4420158.5000

Բացահանք 2

1. Y=8490118.0000	X=4419925.0000
2. Y=8490281.0000	X=4419854.0000
3. Y=8490276.0000	X=4419720.0000
4. Y=8490156.0000	X=4419733.0000
5. Y=8490072.0000	X=4419742.0000
6. Y=8490009.0000	X=4419842.0000
7. Y=8489974.0000	X=4419985.0000


Հանքավայրը շահագործվելու է 2 բացահանքերով: Սկզբում շահագործվելու է բացահանք 1-ը, որի պաշարների մարումից հետո շահագործվելու է բացահանք 2-ը: Ընտրվելու է ընդերկայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխումով:

Բացահանքերը վերջնական դիրքում ունենալու են հետևյալ պարամետրերը՝
բացահանք 1 /բլոկներ 1-B, և 2-B/,

- ամենամեծ երկարությունը՝ 330 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 270 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ 53.0 մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 2.13 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 15,678 մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները՝ 952.6 հազ. մ³, այդ թվում՝
- արդյունահանվող պաշարների քանակը՝ 903.175 հազ. մ³,
- մակաբացման ապարների արդյունահանվող քանակը՝ 128960 մ³,
- բացահանքի օտարման մակերեսը՝ 60782 մ² /6.08 հա/:

Բացահանք 2 /բլոկներ 3-B/,

- ամենամեծ երկարությունը՝ 400 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 185 մ
- բացահանքի առավելագույն խորությունը՝ 42.0 մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ /հողաբուսական շերտը բացակայում է/ 2.29 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 11.73 մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները՝ 557.9 հազ. մ³,



- արդյունահանվող պաշարների քանակը՝ 498.2 հազ. մ³,
 - մակաբացման ապարների արդյունահանվող քանակը՝ 108947 մ³,
 - բացահանքի օտարման մակերեսը՝ 47575 մ² /4.76հա/:
- Հանքավայրում ընդհանուր ծավալները հետևյալն են՝
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները՝ 1510.5 հազ. մ³, տարեկան պաշարները՝ 79500 մ³,
 - արդյունահանվող պաշարների քանակը՝ 1401.375 հազ. մ³, տարեկան պաշարները՝ 75000 մ³,
 - մակաբացման ապարների արդյունահանվող քանակը՝ 237907 մ³,
 - բացահանքերի օտարման մակերեսը՝ 10,84 հա:

Ընդհանուր հանքավայրում կորուստները կազմելու են 109.125 հազ.մ³, կամ 7.2%:

Բացահանք 1-ի 1620-1580 մ նիշ ունեցող հորիզոնների բացումը կատարվելու է բացահանք 1-ի հարավ-արևմտյան մասով անցնող գրունտային ճանապարհից դեպի 1620 մ նիշ ունեցող հորիզոն մոտեցող գրունտային ավտոճանապարհից կտրող կիսախրամների անցումով:

Բացահանք 2-ի 1660-1640 մ նիշ ունեցող հորիզոնների բացումը կատարվելու է բացահանք 2-ի արևմտյան մասով անցնող գրունտային ճանապարհից դեպի 1660 մ նիշ ունեցող հորիզոն մոտեցող գրունտային ավտոճանապարհից հորիզոնական կտրող կիսախրամների անցումով:

Բացահանք 1-ում լցակույտ առաջացնող ապարները 80135 մ³ ծավալով ներկայացված են փխրուն բեկորային ապարներով 32360 մ³ և ներքին ոչ կոնդիցիոն ապարներով 47775 մ³: 1620-1600 մ նիշ ունեցող հորիզոններից արդյունահանվող փխրուն բեկորային ապարները՝ 21390 մ³ ծավալով և ոչ կոնդիցիոն ապարները՝ 11370 մ³ ծավալով տեղափոխվելու են բացահանքի արևմտյան մասում ձևավորվող արտաքին ժամանակավոր լցակույտ: 1595 մ հորիզոնի շահագործմանը զուգընթաց իրականացվելու է ներքին լցակույտաառաջացում: Արտաքին լցակույտից ապարները նույնպես տեղափոխվելու են մշակված տարածություն (ներքին լցակույտ) և հարթեցվելու են:

Բացահանք 2-ում լցակույտ առաջացնող ապարները 31232 մ³ ծավալով ներկայացված են փխրուն բեկորային ապարներով 15224 մ³ և ներքին ոչ կոնդիցիոն ապարներով 16008 մ³: 1650-1660 մ նիշ ունեցող հորիզոններից արդյունահանվող փխրուն բեկորային ապարները 7641մ³ ծավալով և ոչ կոնդիցիոն ապարները 6420 մ³ ծավալով տեղափոխվելու են բացահանք 1-ի շահագործված տարածք /ներքին լցակույտ/: 1645 մ հորիզոնի շահագործմանը զուգընթաց իրականացվելու է ներքին լցակույտաառաջացում բացահանք 2-ի շահագործված հորիզոնների վրա: Արտաքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմելու է 1.07 հա, բարձրությունը՝ 3 մ, շեպի թեքման անկյունը 35°:

Բացահանք 1-ի ներքին լցակույտում տեղադրվելու է 94196 մ³ ապար, որից 14061 մ³-ը բացահանք 2-ից տեղափոխված ապարները: Բացահանք 1-ի 1570 մ նիշ ունեցող հորիզոնում տեղադրվելու է 18450 մ³ ապար, իսկ մնացած 75746 մ³ ապարը փովելու է բացահանք 1-ի ամբողջ հատակով 1,42 մ բարձրությամբ: Բացահանք 1-ի վերականգնվող մակերեսը կազմելու է 53600 մ² է:

Բացահանք 2-ի հատակում տեղադրվելու է 17171 մ³ ապար /այդ թվում փխրուն բեկորային ապարներ 7583 մ³ և ոչ կոնդիցիոն ապարներ 9588 մ³/ 0,4 մ բարձրությամբ: Բացահանք 2-ի վերականգնվող մակերեսը կազմելու է 43000 մ²: Ընդհանուր վերականգնվող մակերեսը կկազմի 9.66 հա:

Լցակույտաառաջացումը կատարվելու է բուլդոզերային եղանակով:



Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է ZIL-130 (KO-002) մակնիշի ջրցան մեքենայով: Խմելու ջուրը մատակարարվելու է ՍՄ-ԵԼԸ-1.4 ջրի ցիստեռնով:

Իրականացված հաշվարկների արդյունքների համաձայն՝ օդի ֆոնային աղտոտվածության սահմանային թույլատրելի արտանետումները չեն գերազանցում թույլատրելի նորմերը:

Հայցվող տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են հանդիսանում բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման աշխատանքները, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը: Սակայն, քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, հետևաբար աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ: Հաշվարկներով հիմնավորվել է, որ աղմուկի և թրթռման մակարդակը գտնվում է նորմայի սահմաններում:

Բացահանքի շահագործման արդյունքում առաջացող կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են բետոնապատ անթափանց հորում, որտեղից պարբերաբար հեռացվելու են հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ բանեցված դիզելային յուղերը, մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, յուղոտված լաթերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերն ու կենցաղային աղբը:

Հանքավայրի արդյունահանման աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է ռեկուլտիվացիայի աշխատանքներ: Ռեկուլտիվացիայի ենթակա տարածքը երկու բացահանքերի կազմում է 9.66 հա: Ռեկուլտիվացիայի են ենթարկվելու նաև արդյունաբերական հրապարակը՝ 0,03 հա: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է նաև կենսաբանական ռեկուլտիվացիա: Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 4574.94 հազ. ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի համար նախատեսվել է 1563.74 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետվությունում եղած տեղեկատվության համաձայն՝ նախատեսվող տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնության հուշարձաններ, ինչպես նաև պատմության, մշակույթի հուշարձաններ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- լեռնային տեխնիկայի շարժիչների կարգավորում, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
- լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթիփերի շարժիչների գազերի արտանետման վրա տեղադրվելու են կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ է կտա կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ,
- փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել փոշեառաջացման օջախների (բեռնվող լեռնազանգվածը, արտադրական հրապարակը, մերձատար ճանապարհները և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,



- իրականացվելու է լցակույտի մակերեսի, խախտված տարածքների ընթացիկ ռեկուլտիվացիա, ինչը կկրճատի լցակույտի մակերեսից փոշու բնական տարածման ծավալները,
- մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում,
- կատարվելու է նավթամթերքներ պարունակող թափոնների (յուղոտ լաթեր, բանեցված, ավտոմոբիլային, դիզելային շարժիչների յուղեր) առանձին հավաքում, ամուր փակվող տարողությունների մեջ և հանձնում համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություններին,

- իրականացվելու է աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով,

- կենցաղային աղբը տեղափոխվելու է մոտակա աղբավայր՝ կնքված պայմանագրի հիման վրա:
Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,

2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով բացահանքի և արտադրական տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ,

4. վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքերում ընդգրկված, էդմիկ տեսակների մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ,

5. Ընդերքօգտագործման տարածքում աղմուկի և թրթռման գործիքային չափումներ ամսական մեկ անգամ:

Մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների իրականացման նպատակով ընկերությունը նախատեսում է տարեկան մասնահանել 750 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և հանրային քննարկման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության



ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի №191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Հանքավայրի շահագործման ընթացքում ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ շահագործման աշխատանքների ավարտից երկու տարի առաջ, հանքի փակման ծրագիրը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շաղափի տրավերտինների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Էսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան